Հավելված N 12

ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(հակիրճ շարադրանք

1. ՈԼՈՐՏԸ

ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը պետական վերահսկողության ոլորտում գործող վարչապետին ենթակա պետական կառավարման համակարգի մարմին է, որի գործունեությունն ուղղված է վարչապետին ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացմանը:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

ՀՀ պետական վերահսկողական ծառայության գործունեության խնդիրը պետական միջոցների և պետական սեփականության օրինական ու արդյունավետ կառավարման, ինչպես նաև պետական կառավարման ոլորտում օրինականության պահպանման նպատակով վարչապետին սույն օրենքով նախատեսված լիազորությունների շրջանակում անկողմնակալ և ամբողջական տեղեկատվություն կամ մասնագիտական դիրքորոշում ներկայացնելն է:

Վերջնական արդյունքը, որին ձգտելու է ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը՝ ՀՀ պետական միջոցների կառավարման, ձևավորման և օգտագործման արդյունավետության և օրինականության գնահատումն է:

Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ հետևյալն է - **6.4 Ինստիտուտների և գործառույթների արդիականացում (էջ 89-90)** Խորքային ֆունկցիոնալ և ինստիտուցիոնալ վերլուծությունների իրականացում՝ պետական հատվածում բոլոր անարդյունավետությունները վեր հանելու և համարժեք վերանայման աշխատանքներ իրականացնելու համար, **6.10 Պետական ծախսեր (էջ 100)** Պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում՝ կապված հանրային միջոցների արդյունավետ ծախսման հետ:

Կապը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների և ցուցանիշների հետ. ԿԶՆ 16.6 Զարգացնել արդյունավետ, հաշվետու և թափանցիկ հաստատություններ բոլոր մակարդակներում

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2027-2029թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում Ծառայությունն իրականացնելու է 1203. «Պետական վերահսկողական ծառայություններ» ծախսային ծրագիրը, որում ներառված են 11001. «ՀՀ վարչապետին ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացման ապահովում» և 31001. «ՀՀ պետական վերահսկողական ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառումները:

Այս միջոցառումները նպաստում են ՀՀ պետական վերահսկողական ծառայության գործունեության և նպատակների իրականացմանը՝ պահպանման համար անհրաժեշտ ծախսերի կատարման միջոցով:

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ծրագրային դասիչը		Ծրագիր /Միջոցառում	2027թ (հազ. դրամ)	2028թ (հազ. դրամ)	2029թ (հազ. դրամ)
1203		***Պետական վերահսկողական ծառայություններ***	**1,198,282.4**	**1,197,895.2**	**1,206,494.7**
	11001	ՀՀ վարչապետին ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացման ապահովում	1,175,143.4	1,182,895.2	1,191,494.7
	31001	ՀՀ պետական վերահսկողական ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավում	23,139.0	15,000.0	15,000.0